

**ԼԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՄԵՆՔ, ԵԿԵԼ ԵՆՔ**

**ԵՐԵՎԱՆ**



**ԱՐՄԱՎ, 2014**

ՀՏԳ 891.981 - 1 Պետրոսյան  
ԳՄԳ 84Հ - 5  
Պ 505

Պետրոսյան Լենա

Պ 505 Սենք, եկել ենք: Բանաստեղծություններ / Լ. Պետրոսյան. - Եր.: Արմավ, 2014. - 64 էջ:

Այս գրքում ամփոփված են 20-րդ դարում հայ ազգին բաժին հասած արհավիրքները՝ ցեղասպանություն, սև 37, 2-րդ համաշխարհային պատերազմ, 1949թ. աքսոր, Արցախյան գոյամարտ, ապա կործանարար երկրաշարժ...

Աստծո կամոք, այդ չարիքներին գրեթե անմիջապես հաջորդել են ազգիս վեր հանունը՝ նրա անկոտրում կամքով և աստվածատուր ուժով, որն էլ ուղղորդվել է Հայ Քոչարիով:

ՀՏԳ 891.981 - 1 Պետրոսյան  
ԳՄԳ 84Հ - 5

ISBN 978 - 9939 - 9089 - 8 - 4

© Պետրոսյան Լենա, 2014  
© Արմավ, 2014

**ՄԵՆՔ, ԵԿԵԼ ԵՆՔ**

# ՄԵՆՔ, ԵԿԵԼ ԵՆՔ

*«Յաղթում է ուժեղը  
և ոչ արդարը:*

**Գարեգին Նժդեհ**

Դ-ու չար հոգի, դու դիվային,  
Անկուշտ, ազահ, դու որկրամուլ...  
Էլ չե՛ս տեսնի՝  
Մեր հին ու նոր հայոց հողի  
Ներկվելը ազնիվ արյամբ:  
Էլ չե՛ս տեսնի՝  
Մե՛նք եկել ենք  
Հայ պատմությամբ՝  
Մեր անցյալով ու ներկայով:  
Մե՛նք եկել ենք  
Եվ մեր խելքով ու արվեստով,  
Ուժեղ կամքով, ամուր ոգով:  
Մե՛նք եկել ենք  
Հայոց զենքի ու բազուկի,  
գրչի ուժով,  
Ու մեր որդոց միասնական  
Հայ կեցվածքով:  
Մե՛նք եկել ենք  
Եռագույնով մեր պատմական,  
Մեր բանակով կուռ, անասան,  
Մե՛նք եկել ենք:

28. 01. 2014 թ.

# ԵՂՆԻԿ

*Երբեք չի կարելի անգեմ մնալ:  
Թող նախ մեր հարևանները իրենց  
սրերը խոփերի վերածեն:*

**Գարեգին Նժդեհ**

Եղնիկ՝ հրաշք գեղեցկուհի,  
Դու հին ու նոր Մեծ Հայաստան,  
Հինդ ամուր ու անկոտորում,  
Նորդ փթթող՝ հինը մտքում:  
Քո չորս կողմը՝ վայրի գագան,  
Ով՝ բացահայտ, ով՝ թաքնված  
Երախը բաց, Ժանիք ցցած  
Քնկոտ արջի աչքի առաջ  
«Հարմար» պահի սպասեցին՝  
    հարձակվեցին,  
    հոշոտեցին,  
    ծվատեցին,  
    խլխլեցին,  
Բզիկ-բզիկ բաժանեցին  
Աջից, ձախից, վերից, վարից...  
Աստված տեսավ ու համբերեց  
    մինչ դատաստան...  
Ուզեց սարքել գագանից մարդ,  
Բայց սպարդյուն,  
Գեմն է իշխում՝

քծնվելու,  
խարդախելու,  
թալանելու,  
տիրանալու,  
սպանելու,

Ինչպես լինի...

Բայց Եղնիկը իր հրաշքով  
Կա, կմնա դարեր հավետ:

21. 09. 2013 թ.

## ՀԱՅՈՑ ԳՐՔԵՐ

Թուրք դահիճի, քուրդ թալանչու  
Չուլումներից ու ջարդերից՝  
Վախից պահած,  
Հողում թաղված  
Հայոց Գրքեր:  
Քարանձավի խորշեր տարած,  
Ախ ու վախով, լաց, հառաչով  
Խորը հորած,  
Ամուր պահած  
Հայոց Գրքեր:  
Հողի տակից արև ելաք,  
Հայ պատմության  
Հոգու հատոր,  
Մտքի թռիչք,  
Հայոց Գրքեր՝  
Բյուր էջերդ չեն թերթվում,  
Չեն կարդացվում:  
Հայոց վշտից ու ջարդերից,  
«Մեծ» ազգերի լռությունից  
Գուք քարացա՛ք  
Եվ քար դարձաք,  
Մեր վշտի ծով՝  
ՀԱՅՈՑ ԳՐՔԵՐ:

01. 09. 2013 թ.





# ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ

*Ժողովուրդը, որ մեռնելի  
չի ուզում՝ երբեք չի մեռնի:*

## *Անարու Ֆրանս*

Մոտենում է հարյուր տարին  
Այն ահավոր զուլում-ջարդի...  
Մոր ու մանկան սուր ճշոցի,  
Ոսկորների անթաղ կանչի...  
- Մենք էլ ձեզ հետ, տե՛ս,  
ապրում ենք՝  
Հայի հոգով, հզոր ոգով  
Ու կերտում ենք  
Նոր ու անկախ Հայ Հայաստան.  
Մեր հայկական խինդ ու կացով,  
Մեր երկերով ու արվեստով,  
Հզոր ու մեծ մեր քանակով:  
- Իսկ մենք ձեզ հետ  
ամուր սրտով,  
Լի հույսերով դեռ ապրում ենք  
Ու պիտ ապրենք,  
Ու պիտ քայլենք՝  
Դարից եկող,  
Դար գնացող  
Այն բարդ ճամփով,  
Որ տանում է  
Մեր միացյալ  
Մեծ Հայաստան:

24. 01. 2014 թ.

## ՀԱՐԱՏԵՎ ԿԱՊՐԵՆՔ

*Ըզգուշացիր դու մլլուկից,  
որ կրծում է կաշու փակից:*

**Կոմիպաս**

Կանաչ բացատում  
Մի չքնաղ եղնիկ՝  
Լռիկ ու մնջիկ,  
Իր ձագուկներով  
Ապրում էր խաղաղ:  
Անունն էր նրա  
Մեծն Հայաստան:  
Նրա չորս կողմը  
Խիտ «եղևնիներ»՝  
Իրենց փշերը  
Բացատին ուղղած,  
Դեմքը թաքցրած  
Սպասում էին...  
Սրանց հետևում,  
Բացատի չորսողին  
Վայրի գազաններ՝  
Երախները բաց,  
Լոզը ծորալով,  
          չփչփացնելով,  
Հոտ-հոտ քաշելով  
          ու այլշելով

Սպասում էին:  
Եվ միշտ սպասեք...  
Իսկ մենք՝  
Հարատև կապրենք:

**ՄԻ ՀՈՒՇԱՔԱՐ ԵԿԵՔ, ԴՐԵՔ**



## ՔԱՅԼՈՒՄ ԷԻՆ

Քայլում էին...

Ծեր ու մանուկ, ջահել կանայք

Առանց դադար ու հանգստի,

Սոված, ծարավ, ոտաբորիկ

Գիշեր, ցերեկ:

Արյունոտված ու ճաքճքված,

Դադար չառած թույլ ոտքերով,

Լի արգանդով...

Քայլում էին`

Ով? կիսամերկ, ով? կիսամեռ:

Անապատի շոգ արևի

Սուլող քամու տակ մնացին...

Չմեռ եկավ.

Տանջանքներում մահ փնտրեցին,

Տառապեցին, մինչև հանգան

Սառած ու տաք,

Բռնաբարված ու հոշոտված

Դիակների, կմախքների

Կույտեր դարձան:

Եղերական մահով մեռան,

Սակայն երբեք հանգիստ չառան.

Հողը իր մեջ նրանց չառավ...

Կեսգիշերին եթե փորձեք,

Անապատով դուք այդ անցնեք

Դուք կլսեք օդում կանգնած

Լաց ու հառաչ, ճիչ...սոսկումով...

Չեզ կկանչեն ու կաղերսեն՝  
Մեր ոսկորը անթաղ մնաց,  
Ոսկորներս հողին հանձնեք,  
Մի հուշաքար եկե՛ք, դրե՛ք,  
Վրան գրե՛ք՝  
Ախր ինչո՞ւ:

## ԵՂԵՌՆ

Ծով արցունքներ:  
Կոտորածներ...  
Արյան հեղեղ,  
Անթաղ դիակներ,  
Տեղահանություն...  
Ցեղասպանություն:  
Կիրթ, նրբագգաց, աշխատասեր  
Մեր խելք ազգին,  
Մեր քույրերին, եղբայրներին  
Բնաջնջին, ցեղասպանին,  
Կին, աղջնակ կրոնափոխին,  
Հարեմ տարան:  
Հող ու ջրին,  
Տուն ու տեղին,  
Նիստ ու կացին  
Ու արվեստին  
Տեր կանգնեցին:  
Տե՛ր Աստված,  
Մոտենում է  
Հարյուր տարին,  
Արդյոք չհասա՞վ  
Ժամը հատուցման:

## ԱՄԲ ԻՆՉՈ՞Ւ

Դեր-Չոր, Դեր-Չոր  
Մութ ու մռայլ դու անապատ,  
Նոթերդ կհտած ութսուն տարի  
Հայի ցավը սրտիդ խորքում՝  
բաց երկնքում,  
Հայի անթաղ ծեր ու մանկան,  
Բռնաբարված աղջիկների  
ու մայրերի  
Գանգեր գրկած ու մռայլված:  
Դիակների նեխված հոտից  
Դու էլ գժված՝  
Լռում էիր...և լռում ես...  
Ախր, ինչո՞ւ...  
Ու մինչև ե՞րբ...



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԵՆՔ, ԵԿԵԼ ԵՆՔ

ՄԵՆՔ, ԵԿԵԼ ԵՆՔ .....	4
ԵՂՆԻԿ .....	5
ՀԱՅՈՑ ԳՐՔԵՐ .....	7
1914 ԹՎԱԿԱՆ ԵՎ... .....	8
ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ .....	9
ՀԱՐԱՏԵՎ ԿԱՊՐԵՆՔ .....	10

## ՄԻ ՀՈՒՇԱՔԱՐ ԵԿԵՔ, ԳՐԵՔ

ՔԱՅԼՈՒՄ ԷԻՆ .....	13
ԵՂԵՈՆ .....	15
ԱԽՐ ԻՆՉՈ՞ՒՒՄ .....	16
ՀԱՐՑ ԹՈՒՐՔԵՐԻՆ .....	17
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....	18
ՀԱՏՈՒՑՈՒՄ .....	19
ՆԱ .....	20
ԽՈՍՈՒՆ ԱԶՔԵՐ .....	21
ՈՎ .....	22
ՆԱՀԱՏԱԿ ՌԵԺԻՍՈՐԻՆ .....	23
ՄԱՐԴ ԱՍՏՈՆ .....	24
ՆԱՀԱՊԵՏԸ .....	25
ՄԱՍԻՍ .....	26
ՄԱՍԻՍ ՍԱՐԸ .....	27
ԱՆԻ .....	29
ԱՎԱԶԻՆ ԳՐՎԱԾ ԿՏԱԿ .....	30

## ՄԻՐՈՎ ՇԻՆՎԱԾ ՀԱՅԻ ՏՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻՔ .....	32
ԽԱՉՔԱՐԵՐԸ .....	33
ՄԻՐՈՒՄ ԵՄ ՁԵՁ .....	34
ՋԱՐԴԵՐ... ՍՈՒՄԳԱՅԻԹ... ԵՎ... .....	35
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ-25 .....	37
ՍԵՆՔ .....	38
30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ .....	39
ԳՅՈՒՄՐՎԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ .....	40
ՍԵՎ 37-Ը .....	41
ՊԱՏԵՐԱՉՄ .....	42
ՉՈՀՎԱԾ ԵՂԲՈՐՍ .....	43
ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ .....	44
1949 ԹՎԱԿԱՆ .....	45
ԴԵՊԻ ԱՔՍՈՐ .....	46
ԴԻՎԱՅԻՆԸ - ԵՐԿՐԱՇԱՐԺ .....	47
ԳԱՅԱՆԵ ԴՍՏԵՐՍ ԵՐԱՉԸ .....	48
ԵՐԿՐԱՇԱՐԺ... .....	49
ԲԼՈՒՐԸ .....	51
ԵԿԵՔ .....	52
ՈՎ ՁԵՌՔ ՍԵԿՆԵՅ .....	53
ՏԵՍԱ .....	54
Ո՞ՒՐ ԵՄ ԳՆՈՒՄ .....	55
ՀԱՅ ԿՄՆԱՍ .....	56
ՊԱՏԸ .....	57
ՀԱՅԻ ՏՈՒՆ .....	58
ՔՈՉԱՐԻ .....	59
ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ .....	60
<b>ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ .....</b>	<b>61</b>

**ԼԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ՄԵՆՔ, ԵԿԵԼ ԵՆՔ**  
(բանաստեղծություններ)

**ЛЕНА ПЕТРОСЯН  
МЫ ПРИШЛИ**  
(СТИХИ)

*Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան  
Չեամփորումը՝ Արմինե Քոչարյանի*

*Չափսը՝ 60x84 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ 80գ/մ<sup>2</sup>:  
Ծավալը՝ 4.0 րպ. մամուլ:  
Տպարանակը՝ 200:  
Գինը պայմանագրային:*



*«ԱՐՄԱՎ» հրատարակչություն*